Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի «Արարատ համայնքիՆոյակերտ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը համալրելու համար (0.75 դրույք): Վարձատրությունը՝ ըստ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակի:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերը անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 25.03.2022թ-ի No471-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ մշակված հարցաշարերի: Հարցազրույցն անցկացվում է առանձին յուրաքանչյուր մասնակցի հետ:
Մրցույթին մասակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝
1. դիմում /Ձև1/
2. բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/առկայության դեպքում/
5. ինքնակենսագրություն
6. մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ , կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Կրթության, Գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայք էջում հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ 12.08.2022թ-ից մինչև 08.09.2022թ. ներառյալ, ամեն օր ժամը 10:00-18:00-ը բացի շաբաթ, կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա ս/թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 11:00 –ին «Արարատ համայնքի Նոյակերտ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, Արարատ համայնք, Նոյակերտ գյուղ, Նոյի 29:
Էլեկտրոնային հասցե noyakerti_mankapartez@mail.ru
Տեղեկությունների համար զանգահարել 093187869 , 077292155 հեռախոսահամարներով: